

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 12.

Ս Մ Ս Ս Գ Ի Ր

ԴԵԿՏԵՄԲԵՐ 31.
1870.

Ա. Զ. Գ. Ս. Յ. Ի. Ն. Բ. Ս. Ն. Ս. Ս. Ի. Ր. Ա. Կ. Ա. Ն. Ե. Ի. Գ. Ր. Ա. Գ. Ի. Տ. Ս. Կ. Ա. Ն.

Խ Ղ Ճ Ի Ա Ջ Ա Տ Ո Ւ Ք Ի Ի Ն (*)

Խ Ղ Ճ Ի աղատութեան վրայօր խօսեցած ժամանակս քրիստոնէութեան հին դարերը թողլով, ուր տեղ նա այնքան փառաւոր դիւցազուններ ունեցաւ՝ հոգւոյ փրկութեան համար արիւն թափողներ, կ'անցնէիմ դէպ ՚ի միջին դարը, ճանչնալով միանգամայն անոր մեծութիւնը: Հին որ կողմը նայիմ, հալածողներու և հալածեալներու կը հանդիպիմ, մանաւանդ Վերոպայի մէջ, ուր ստորերկրեայ քննարաններ՝ մարդկային աղատ հոգիներու գաղտնի դարաններ կը կառուցուին, ուր ոչ միայն խեղճ քաղաքացիներ, սուրբ կուսաններ, ողջխոհ մանկա-

մարդներ, և հարուստ պատանիներ, այլ երեւելի կոմսեր և իշխանազուններ դարաներով խիղճերնուն հետ միանգամայն և իրենց անձերը գերութեան և մշտնջենաւոր բանտարկութեան կը մատնուէին: Կոնց շատերուն բերանը բռնութեան երեսէն կը կարկէր, մօտալուտ մահը և մահատիպ վիշտերը անոնց մտածութիւնը պահ մի կ'այլայլէր. բայց հոգին եւ խիղճը կը սլանային դէպ ՚ի աղատութեան աղբիւրը յերկինս, այն Արդւոյ մարդոյն որ ըսաւ՝ « Ինձ եկողը դուրս չեմ ձգեր: » Չեմ ուզեր հօս ՚ի հանդէս բերել Հայաստանի Կերոնները և Վաղենտիանոսները, Շահ-Ապաղ, Լէնկթիմուր և իրենց նմանները, ու-

(*) Շարունակութիւն և վերջ, տես թիւ 11.

բոնք զՀայաստան արիւննլուայ ըրին , առանց կարենալու խեղդել խաղա մարդկային խղճին ձայնը . և որչափ աւելի հայածանքներն ու մահերը կը յաճախէին , այնքան աւելի հոգիները կը պայծառանային և բռնութեան սուրը կը բթանայր :

Ահ , կը տեսնէք սա կարաւաններու խեղճ և ողորմելի խումբերը , ասոնք դէպ 'ի խորըմ' և դէպ 'ի ' եհաստան կ'ուղեւորին , հետերնին տանելով իրենց խղճի աղատութե՛հ հետ նաև հայրենի տաճարներուն այն նուիրական մասուհքները , այն սրբազան մատանները որոնք զիրենք իրենց օրոցքին մէջ սրբագործեցին , և ազատ մարմնոց մէջ ազատ հոգի մի աշխարհիս վրայ զետեղեցին : Ամանք 'ի խորըմ' և մեծագոյն մասը 'ի ' եհաստան հասնելով , քիչ ժամանակի մէջ իրենց խղճին աղատութեանը կոթողներ կը կանգնեն հոն , եւ անոնց վրայ կը ծխեն իրենց հոգւոյն քաղցր բուրմունքները դէպ 'ի 'Ստուած' բացարձակ յակն , առանց մոռանալու երբէք այն հոգեւոր կենսատու զգացմունքները՝ զոր Հայաստանի լուսաւորիչ մի հոգեւոր ծննդեան օրից 'ի վեր ներշնչէր էր իրենց իւր յաւիտենական յիշատակաւը : Սոր կը պարտաւորէին անոնք իրենց ճշմարիտ լուսաւորութիւնը , որոց մէջ կը կայանայ հոգւոց աղատութիւնը , և զայս չկորսունցնելու համար յանձն առին իրենց հայրենի քաղցր կլիմայն և ծննդական երկիրը թողուլ , և տարագիր ըլլալ հեռաւոր վայրեր , հետեւելով իրենց խղճի աղատութեանը :

Բայց բարէ , մարդկային սերունդը կարծես թէ նախասահմանուած է մինչեւ անդամ իւր ամենասիրելի աստուածաշնորհ աղատութենէ կապտուելու : Արք հայրենեաց տարագիր

որդիքը օտար իշխանութեան մէջ ազատ կը համարէին զիրենք բռնութենէն , քան զ'էնկթիմուրն աւելի չարագոյն և քան զՇահ-Ալպաղն աւելի անգթագոյն թշնամւոյ մի կը հանդիպին , այն է 'Աիկոլ եպիսկոպոսը , խղճի աղատութեան ամենէն մեծ թշնամի և մարդկային հոգւոց փրկիւթեան մենախաճառը , երբ 'ուտերի և Ապրիլինի ձեռօք տեսաւ իւր ժողովրդեան տասանորդիլը , և ըրած մեծամեծ կորուստները , որոնց մէջ կային պալատականներ ու թագաւորներ և ամբողջ ժողովուրդներ , խորհեցաւ նա անոնց դատարկը խեղճ Հայոց խմբակներով լեցնել . 'Աիկոլ անոր նպաստեց և աշխարհային բռնութենէ փախչող ողորմուկ արարածները տարաւ յանձնեց անգթաբար հոգեւոր բռնութեան ձեռքը : 'եհաստանէն գուժելու ձայն մի փրութաւ . խղճին խորերէն կոծ ու վայնասուն մի լուսեցաւ . լացաւ Հայաստան իւր զաւակունքը ու չուղեց միսթարուիլ , որովհետեւ չկային :

Արք Աւրոպա թէ դարուն մէջ սուրբ Բարդուղիմէոսի օրուան նշանաւոր դէպքը տեղի ունեցաւ , եւ խղճի աղատութե՛հ համար մաքառող գիւցազուններ բոլոր մարդկային սերին երախտագիտութեան արժանի կը հանդիսանային , երբ թէ դարը կ'ըսեմ (եկեղեցիէն դուրս) ներողամտութիւն կը քարոզէր , այս դին 'Սսիոց մէջ , թուրքաստանի մայրաքաղաքին մէջ հզօր տերութեան մի աչքին դիմաց ընդհակառակը աններութեան գործեր տեղի կ'ունենան : Հայկական եկեղեցին կը հալածուի խղճի աղատութեան թշնամւոյն արբանեակներէն , Հայոց գրկէն անբուրեւոյթ ձեռօք կը յափշտակուի իւր սիրելի Պատրիարքը , եկեղեցւոյն

պաշտարանը, որուն խղճի աղատութիւնը երկաթներու անգամ դէմ դնելով, վերջապէս երկաթներու տակ հեծելով իւր հոգին յաւիտենականութեան դռները կը յանձնէ, անրնիճելի մնալով հոգւով և մտքով, յիշատակ թողլով յաշխարհի իւր երկաթէ դիմաւ կով անուան հետ մէկ տեղ դիւցադնական օրինակ մի, որով զարմացոյց արքունիքները՝ մինչեւ անգամ Վաթիկանի պալատը: Արձեռնադրութեան ճեղքը գործուեցաւ այս բռնութիւնը, այն ազգին՝ որ սկսեր էր ներդաժնուիլ իւր քարոզել, Վոյդէրի վարդապետութիւնները թէ և յանդուգն՝ սակայն խղճի աղատութեան նպատակով դասեր տալ սկսած ժամանակ:

Աւրոպայու մէջ 92 թուականը մեծ ու օգտակար դասեր տուաւ, որոնք գաղղիական յեղափոխութեան արդիւնքն եղան, թողունք այն վրտանդները որոնք ընկերացան ընդհանուր բարեաց հետ: Այսպէս թէ յիշեալ թուականը խղճի աղատութեան դուռն եղաւ, անկէ ծագեցան մարդկային սեռի յառաջադիմութիւններ և մտքի լուսաւորութիւններ, բայց Ասիոյ մէջ այդ երեւելի դէպքը արձագանք չտուաւ, հոս ազգութիւնները դեռ իրենց բարոյական անզգայութեան մէջ թմրած կը մնան. հազիւ թէ կը լուրի ներդրութեան ձայնը և անմիջապէս կ'անհետանայ, դեռ բռնական իշխանութիւն մի կը տիրէ եկեղեցւոյ մէջ: Աւետիք պատրիարքի մի կորստեանը դէմ կարծես թէ վրէժինդրութեան միջոցներ կը պատրաստուին բարձրագոյն ձեռքով: Ահ, որքան քաղցր է ազգային կրօն մի բար իւր վեհութեամբը և սեփական պաշտամունքներովը, կարծես թէ երկինք զայն սիրելու և պաշտելու համար մարդոյս հոգւոյն մէջ առանձին

զգացմունք մի տուած է: Բայց որքան ալ դառն է նոյնը ուրիշ մի ևս բռնաբար սիրցնել տալ, թէպէտ և նա նոյն կրօնին մէջ մեծցած և յետոյ դասալիք եղած ըլլայ: Այն թէ պաշտամունքը հալածիչ իշխանութիւն մի է, քան լիցի, կրօնական ճնշումները ապօրինաւոր համարուած են միշտ նոյն իսկ կրօնից շեղինակին վարդապետութեամբը: Քաղաքականացեալ ազգն ունի հարկաւ իւր առանձին կրօնը և պաշտաման կերպը, այս կրօնիս քարոզ պիտի ըլլայ ոչ բռնութիւնը՝ այլ ճշմարտութիւնը, ցոյց տուր նորա սրբութիւնը և հոգւոյ փրկութեան միակ միջոց և յաւիտենականութեան ճանապարհին առաջնորդ ըլլալը, և այս բաւական է: Արձեռն մարդոյս ազատ խղճին մէջ միայն իւր զօրութիւնը կը ներգործէ, միտքը կը լուսաւորէ, և ահա ինքնին պիտի սիրէ նա զճշմարտութիւնն և հետեւի անոր: Ասոր փորձը տեսնուեցաւ ներկայ դարուս առջի քաղաքական զօրութիւնը որքան որ բռնացաւ անջատեալ եկեղեցւոյ վրայ, սակայն չը կարաց նա կամքը խոնարհեցնել և խիղճը գերել, վիճն աւելի մեծցաւ, ինչ որ կրնար ընել սէրը, բռնութիւնը չկարաց ընել:

Այն զարմանայք, սիրելի ընթերցողք, թէ որ ուրիշ տեսութեամբ մի ակնարկել ուզեմ այս մեծ գործիս, ինչպէս ոմանք՝ չքսեմ շատերը ջանացին հակառակ տեսութեամբ պրնդել և բոլորովին բռնութեան ընծայել գործոյն անյաջողութիւնը, որում մէջ չէ թէ կրօնական շահերն էին դեր ունեցողները, այլ յաւէտ ազգային միութիւնը՝ քաղաքականացեալ առնելով: Ինչպէս պիտի զարմանայ մարդս՝ երբ տեսնէ թէ բռնութիւնը բոլորովին բաժանեալ մասին կողմէն

կը գործուէր : Ժողովուրդը իւր գրել-
 խաւորներովը եղբայրութեան անկեր-
 նին երկընցուցած խաղաղութիւնն
 համբուրելու կը պատրաստուէին ,
 համոզուած ըլլալով որ իրենց միու-
 թեան մէջ պիտի ըլլայ ազգայնութե-
 քարոյական սյժը , և լուսաւոր յառա-
 ջադիմութիւնները հայրենի կրօնին
 օծութեամբը : Այլ ո՞վ էր իրենց բը-
 նական ձգտման և ներքին համոզմա-
 նը դէմ կեցող և բռնաբարող , կղե-
 բական փոքրիկ խումբը , որ իւր դա-
 բաւոր իշխանութեան ուժը ռամկա-
 կան տգիտութեան վրայ բանեցրնե-
 լով անոնց ազատ խիղճը ճնշման տակ
 դրաւ , խեղճ ժողովրդոց մարտիրո-
 սական պատկեր խոստացաւ , անոնց
 նեղութիւնը , մահը՝ ճշմարտութեան
 և հաւատոյ համար ըլլալ ցոյց տը-
 ւաւ , և այնչափ արտօրանաց , հալա-
 ծանաց և տառապանաց պատճառ է-
 դաւ : Ի որը այս արկածից մէջ եթէ
 ճշմարտութիւն մի կայր , այն էր՝ ա-
 նողորմ կղերականաց իրենց անձնա-
 կան շահը պաշտպանելը , իրենց փա-
 ռասէր կրից զոհել այնչափ անմեղ
 արարածներու տագնապն ու նիւթա-
 կան կորուստները պատրուակաւ կրօ-
 նի : Արօնը պաշտպանելու տարապարտ
 ջանքերով , ազգայնութեան նուիրա-
 կան կասր բոլորովին խղել մտաբերե-
 ցին , առաջինին մէջ յաջողեցան այն
 ՚ի նախատինս ոգւոյ ճշմարիտ քրիստո-
 նէութեան , բայց երկրորդին մէջ ոչ
 երբէք . անոնց ոգւոյն մէջ կրօնական
 մեծ խտիրներ և ատելութեան սեր-
 մունք ցանեցին , այլ երակնուն՝ մէջ
 ազգային արեան փոփոխութիւնն չկա-
 ըողացան մոցընել :

Այն ժամանակէ՛ի վեր բաժանեալ
 մասին մէջ Թորոսովիչ մի սկսաւ տա-
 կաւ երեւան ելնել , սակաւ առ սա-
 կաւ սկսաւ եղջիւր բարձրացնել , Այլ

կող մի էր այս՝ բայց ոչ | Եհաստանի
 մէջ : Իսկզբան իւր գործը անոր նման
 բռնական չէր , յանկարծական փոփո-
 խութիւնն ընելու արամադիր չէր ,
 ըստ սրում գիտէր նա որ իւր ժողո-
 վուրդն ալ , Ասմենիցի և | Եհաստանի
 սերիչ քաղաքաց տարագիր և ընկճեալ
 Հայերը չէին : Աւստի Թորոսց որ
 ժամանակն ինքնին նպատէ իւր ա-
 նօրէն ձգտումներուն և Ախիոլեան
 խորհուրդներուն , Այլ որպէս զի գոր-
 ծը աւելի հիմնաւոր և հաստատուն
 ըլլայ , իւր իշխանութիւնը ուղեց բար-
 ձրացնել և քաղաքականապէս եւս
 զօրացնել և ընդհանրացնել : Այլ
 այս վատիկանեան խորհուրդներով
 և ճիգովթական գաղափարներով տու-
 գորուած՝ սուրբ Պետրոսի Թուրին
 ծայրը պատեանէն դուրս հանել փոր-
 ձեց և իւր միամիտ ժողովրդոց ցոյց
 տալ , որոնք սկսեր էին ազգութեան
 և կրօնին մէջ եղած անհուն խորու-
 թիւնը իմանալ , և երկուքն հաւա-
 սարապէս պաշտել առանձին խորան-
 ներուն վրայ , առաջինը իրենց սրտին
 և երկրորդն իրենց ոգւոյն բարձրու-
 թեան մէջ : Առաջին խորանը ուղեց
 տապալել երկրորդ Ախիոլը , այն տա-
 պալեց Համազգեաց ընկերութիւնը
 պետական հարուածով մի ջնջելով .
 բայց այս խորանին աւերակները մը
 նացին , որպէս զի Աբուղարգանի
 ձեռօք կործանեալ տաճարին փլատակ-
 ներու վրայ բուն Իսրայելի ձեռօք
 նոր տաճար կանգնուի : Աոր շինու-
 թիւնը որչափ դանդաղ նոյնչափ հաս-
 տահիմն էր , տաճարի առաջին շինու-
 թեան նման անձոյն և լռիկ կ'աշխա-
 տուէր , սակայն այնչափ աւելի աչ-
 խատողաց սրտին մէջ ալ բարեպաշտ
 խիղճը իւր ազատութեան սահմաննե-
 րը կ'ընդարձակէր : Ախիոլ ժամանակն
 եկած համարեց իւր գիմակն վար առ-

ներու , և իւր անձը ինչպէս որ է՝ աչխարհի ցոյց տալու . և ահա Հասուն երեւեցաւ բոլոր իւր բարոյական մեր կութեամբը և կուիրինեան գաղափարներով . նա ուրիշ բան չէր՝ բայց եթէ միջին դարու անձնաւորութիւնը , այն գարշելի և դժոխատիպ դարուն՝ յորում խղճի ազատութիւնը իւր կատարեալ գերութեան մէջ կը գտնուէր : Ահ , որքան սիրելի է ինձ Հասունը իւր հալածանքներովը և եկեղեցական շանթերովը՝ քան թէ կըրօնին տուած իւր անարգութեամբը : Արովհետեւ նորա ձկտումներուն մէջ երկու գործողութիւն կ'երեւին , եկեղեցւոյ ղէնքերու գործածութիւնըն ու միանգամայն անոնցմով բուն եկեղեցւոյն և կրօնին բրած անարգանքը : Սակայն ուշ էր մնացեր Հասուն , ժամանակն զգալապէս փոխուած էր , ժողովրդեան մտաց՝ գէթ մեծագոյն մասին՝ լոյսը ծագեր , թանձրը տգիտութիւնը բոլորովին փարատեր և ազատասիրութեան ոգին թագաւորեր էր : Նա ուրիշ բան չը գտաւ իւր դիմաց՝ բայց եթէ հին գաղափարաց յեղափոխութիւն մի . ՚ի զուր ջանաց և պիտի ջանաց թերեւս սուրբ Պետրոսի թրովը անոնց հետ վարուելու : Պապական եկեղեցւոյ շանթերը չունին իրենց առջի զօրութիւնը . ճշմարտութեան ուժով հը զօրացեալ միտք մի քան զՎարիզու պարիսպները անգծելի և անկործանելի են հնացեալ ղէնքերու դիմաց : Հետեւեալս՝ ՚լիւմ մ'ալ չկարողացաւ ոչ կղերին և ոչ ժողովրդեան մտաց վրայ ազդեցութիւն բանեցընել . իւր արձակած շանթերը իւր գլխուն վըրայ դառնալով վիշուեցան՝ ըստ ասելով Յեսսեայ որդւոյն :


Այս օրինակ ոգւոյ և մտաց արիւնութեան վրայ՝ տեսնելով ընդհանուր

ազգը և ազատութեան և լուսաւորութեան բարեկամները , իրենց ուրախակցութիւնը փութացին յայտնել հրապարակական թերթերու միջոցաւ : Բնութիւնը ամօթապարտեղաւ . Հռոմը իւր պարտութիւնը խոտտովանեցաւ . իւր կրօնական ղէնքերուն տկարութիւնը յայտնի ցուցուեցաւ , որ նշան էր մօտալուտ և անմիջական կորստեան իւր քաղաքական իշխանութեանը : Յաղթական ժողովուրդը , որու ոյժն ու զօրութիւնը բարոյական և իմացական լուսաւորութեան մէջն է , աւելի կազգութեցաւ , և գործն աւելի յառաջ մղել ջանաց , այսինքն քաղաքականապէս եւս պաշտպանել իւր խղճի ազատութիւնը , իւր ազգային իրաւունքը , իւր եկեղեցին , ասով աւելի մօտեցաւ իւր բուն ծնող եկեղեցւոյն թէ՛ ազգայնութեան կապովը և թէ՛ լուսաւորեալ գաղափարներովը . և որչափ աւելի նորա մօտենալու ըլլայ , այնչափ աւելի պիտի սպառնա իւր կրօնական ազատութիւնը , խղճի և խորհելու ազատութիւնը : Եամանակը՝ որ մայր է երեւելի արդիւնքներու և մեծամեծ գործքերու , նա պիտի սրակէ անշուշտ օր մի , և թերեւս շատ հեռու չէ , մեր համարիւն և համազգի եղբարց սոյն երեւելի գործը : Այլ թշնամին խաւարի և ազատութեան պիտի ընդունի իւր վերջին հարուածը , ինչպէս որ ընդունեց իւր անսխալ Տէրը :

Սոյն ճառս վերջացրնելով իբրեւ կնիք մէջ կը բերեմ հին առած մի , որ կըսէ « Մի՛ դպչիր թագուհիին . » ես ալ կըսեմ մի՛ դպչիր խղճմտանաց , որ ազատութեան հոգին է . թող ըզմարդը որ գործէ , նա ազատ է իւր ներքին գործոցը մէջ , հետեւապէս սպատասխանատու է իւր Արարչին՝

հետեւելով կամ ոչ ճշմարտութեան, թէ՛ս, քանի մեծ պատասխանատուութեան ենթակայ է նա որ իւր նմանւոյն հետ՝ իբրեւ անբան և անշունչ արարածոց հետ կը վարուի, ստորին էակաց գասն իջեցընելով զայն, որոնք զուրկ են պատասխանատուութենէ, և բնական ճակատագրի մի օրինաց ենթարկեալ: Ի՞նչ օգուտ է մարդոց արտաքին ազատութիւնը, երբ նա իւր ներսիդին՝ իւր հոգւոյն և մտաց մէջ գերի է, երբ նա իւր մտաց թեւադուրթեան չէ ազատ հետեւելու: Ասով ուրիշ բան չենք կարող ընել, եթէ ոչ մարդոցս վրայէն պատասխանատուութիւնը վերցընել, և բարոյական էակը նիւթոյ իշխանութեան տակ ձգել:

Արջանիկ պիտի լինի այն դարը, և ես արդէն կ'ողջունեմ զինքը, երբ իմացական լոյսը ընդհանուր սփռելով բարոյական աշխարհիս վրայ, և Աւետարանի ճշմարտութիւնը բոլոր իւր վեհութեամբը թագաւորելով իւրաքանչիւր մարդ ազատ պիտի լինի հետեւելու իւր ըւսուցողութեալ խղճին. և այն ժամանակիս մէջ մարդկութիւնը իբրև մի մարմին և մի անձն մշտնջենապէս պիտի տիրէ, ինչպէս Ադամ փափկութեան դրախտին մէջ, և աշխարհս ազատ պիտի լինի ամեն կերպ անիրաւութիւններէ և զրկանքներէ, որոնք ՚ի նախատինս մարդկութեան անխղճաբար կը գործուին երկրիս վրայ:



ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՅ ԽՆԴԻՐԸ

(Շարունակութիւն, տես թիւ 11.)

Այն բողոքս ընդունուեցաւ, եւ Վսեմ, Ապղիֆ փառայն ալ մեր իրաւունքը քաջ ճանաչելով կ'ուզէր մեր զրկանացը վերջ մը տալ, կամ դոնէ խաղաղասիրական միջոց մը գտնել, վասն զի կը վախնար միանգամայն, զի տեղով Աստին կղերին ժամանակ ժամանակ ըրած յանդուգն ձեռնարկութիւններն, և անոնց մէջ որ և իցէ կերպիւ յաջողելին, վասն որոց չլըստահեցաւ կտրոզական պատասխան մը տալ: Արբ միջոցը երկու օր մնաց Աստինաց գալուն, Վսեմ, Ապղիֆ փառայն իւր Թարգման Ստիրեատիս էֆէնտիին հետ մեր վանքն եկաւ տեսութեան պատճառաւ, եւ սոյն խնդիրը ինքը բացաւ մեզմէ յառաջ, և ըսաւ. «Չեր բողոքը կարդացի, իրաւունքնիդ արդար է, և ես պարտաւոր եմ իմ Տէրութեանս հարտակոց իրաւանց վրայ օրինաւոր հրահեմ: Այլ բան մըն ալ կայ որ, այն ալ պէտք է մտածեմք, ետքը քաջ ետեւաբէն, կեող շքաբանայլը: Այս Աստին կղերաց արարքներն և բնութիւնն դուք մեզմէն լաւ գիտէք, ասոնք երբ իմանան թէ իրենց այս սովորութիւն պիտի խախտուի, թէ և արդարութեամբ, բայց անոնք բոլոր աշխարհ վիճակի կուտան, նախ դեպքանին, ապա Բաբային, յետոյ բոլոր Աւրոպիոյ տէրութեանց սուտ ու սխալ անգեկութիւն կուտան: Այս մանաւանդ, ահա երկու օր մնաց անոնց գալուն, ամեն բանէն յառաջ իրենց բնական եղած ազատամբական ոգին ձեռք պիտի առնեն, բունն զօրութիւ պիտի յարձակին ձեր վրայ, և ես պիտի սարտաւարուիմ միջամտութի